

Այնպիսի աշխարհ

www.syuniacyerkir.am

**Մարդկային
օվկիանոս ալեկոծող
Հողմերն են ահեղ
շաշում դարձյալ...**

ԵՐԻԾԵ ԶԱՐԵՆՑ



19 հոկտեմբերի 2014թ., Կապանի մշակույթի ռահինճ, բեմահարթակին փոքրի մեներգի Ռազմիկ Հարությունյանը է

**Այսպեղ մի խրոխիք անցյալ է հանգչում, եւ
մի փառակոր զալիք է հառնում**

Կատանի տոնը

Կապանում հոկտեմբերի 19-ին նշված քաղաքի օրվա միջոցառումները (օրն այս դարի անցկացվեց «Կապան՝ չընալի իմ օրրան» կարգախոսով) մեկնարկեցին մարզկենդրոնի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցուց՝ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Սահկար Վարդապետ Հակոբյանի օրինական առաջնորդութանի:

Ορψω ήηδειτηρ ακήρεν ήηρ χαροπάνακοιφη-
νηρ απωλ Ρωηρεοιφη ήητραχαμάναιηηοιμ, ηη-

თხე ღალატი თონქ მასინაცხენსერ, უკიდები
მარყაჭის ჟირენ სავასორეანი სი კაფანი
ღალატის უზოთ პარატესუანი გლეავი-
ლორეანმ ბაზებით ის ბაზებისაცხენ რენ-
ლიც ჰარდების სხვ ჰაერენალანის, არგა-
სუან ადასამართლის, 88-ე ხელოვანობის
ღირებულები, ანიაკ ლირაბ ღირებულები
ჩემასაც: ღალატების არალორეტინ
კასტორები ნახი ღარების სტებები ჩილა-
ხამალების, ირთებულ სინქ მასანაცხენსერ
ღალატი ჟირენ გარდების ენაც კაფანი
ცალი ჟირენ სასისუანი ანდან რამარაც: აკ-
ირები ვარ სი კაფანი გრადების რამარაც:

Ուստանկարների, տարբեր իրեղեն արժեքների վաստարդերի միջոցով ներկայացված էն կապաճի պատմության տարբեր ժամանակահատվածները. նրա հաճախակի բնակիչները, հանքարդյունաբերության պատմությունը, խորիրդային ու անկախ հայաստանում քաղաքի կյանքի արժանահիշատակ դրվագները, Ալբայիան ազատանարսն ու դրա կապաճի ենոքումները:

Սարգիս Արմենի Կազեն Սարգսյանի անվան մանկական գրուայցուն կազմակերպվել էր գեղարվեստի, արվեստի, մանկապատանեցների համար՝ մասնաւոր համարության մեջ:

• Stay tuned for more updates!

Այս փարածաշրջամի փասսակ գյուղեր
դրանսպորտ չունեն. հարեւան գյուղում,
Սիսիանում բարեկամ է մահանում, չեն կա-
ռողանում գնալ՝ Վերջին հրաժեշտք փալ:

Սյունիիր մարզի մի շարք համայնքներ բաղի ուղղի հմաստով կտրված են իրարից ու մարզպետնորոնից: Մի քանի տասնյակ համայնքների թվականին 21-րդ դարին հարիր տեղաշարժվելու հնարավորություն չընեն: Բնակչիները կատակում են՝ ճախնադարյան տրանսպորտից են օգտվում. ով ծի կամ է ունի, հավեսն էլ տեղն է, ժամանակ է ունի՝ ձիով կամ էշով է ճանփանկում, որ հասնի հարեւան զյուր կամ մարզպետնորոն: Ով էլ հնարավորություն կամ ցանկություն չընի չորոշական կենդանին որպես տրանսպորտային միջոց օգտագործելու, դուրս է գալիս գլխավոր մայրուղի ու սպասում Աստուծու միջնորդությամբ օտար Վարորդների օգնությանը:

Մի շարք համայնքներում ներմարզային տրանսպորտ չի գործում, անգամ որոշ քաղաք-Ներից մարզկենտրոն տրանսպորտ չի աշխա-

«Այ բայա ջան, որ շրջկենտրոնում՝ Սիսիանում, գործ ենք ունենում, գյուղից ավտոյով մարդ չկա եղ կողմերը գնացող, դուրս ենք գալիս ճամփին կանգնում, ծերի հետ էլ՝ աղոթում, որ մեր ճամփերով անցնող մի ավտո լինի, նստելու տեղ էլ ունենա, որ ուղեւոր Վերցնի: Ամսիններով բարեկամի երես չենք տեսնում. ախսպոր ընտանիքին 2-3 ամիսը մեկ էլ չեմ կարում հյուր գնամ, ինչո՞վ գնամ, տրանսպորտ չկա, տաքսո՞վ, մի հատ տաքսի կա գյուղում, են էլ կամ փող չկա, փող էլ որ էլ պահին լինում ա, տաքսին ազատ չի լինում: Սիսիանում բարեկամն մեռավ, չկարացա գնամ. մարդկությունից, բարեկամությունից կտրվել ենք», – «Առավոտի» հետ գրույցում պատմեց Շենաթաղը համայնքի մի բնակիչ, որը չցանկացավ՝ անոնցը հրապարակենք: Շենաթաղը գտնվում է Սիսիանից 35կմ հեռավորության վրա. Եթե բնակիչները Սիսիան կարողանում են գոնեատաքսիով գնալ, ապա մարզվենտրոն՝ Կապան, շատ քէրը. գյուղը Կապանից հեռու է 139 կիլոմետրու: «Աստված չանի՝ մարդ ծանր հիվանդանա, եղ էլ մի ուրիշ դարդ ա, ին սադ ավտոցունե՞ն, հիվանդին ին էջի վրա չե՞նք տանի Սիսիանի հիվանդանոց, տաքսով ենք տանում: Էլ չեմ ասում, որ Կապանում գործ ենք ունենում, մի հատ փաստաթղթի համար պիտի 25 հազար դրամից ավելի փող տանը տաքսուն, որ գնանք ու հետ գանք Կապանից: Քյասիր ժողովուրդ ենք, որտեղից մեզ եղան փող», – դգոհեց շենաթաղին:

Հայաստանի ամենափոքր քաղաքը համարվում Դաստակերտի բնակչութեան էլ նույն վիճակում են՝ համ «քյամիք», համ էլ տրանսպորտ չունեն, ու մարզգենտրոնից էլ կարելի է ասել՝ կտրված։ Դաստակերտի բնակչութեան մեջն էլ «Ալռավոտին» պատմեց, որ արդեն մի քանի ամիս է, ինչ հասարակական տրանսպորտից չեն օգտվում. «Ոչ հարեւան գյուղ գնացող ավտոբուս կա, ոչ Սիսիան, ոչ էլ Կապան։ Ոնց որ աշխարհից կտրված լինենք՝ ոչ խանութ ունենք, ոչ դեղասուն»։ Դաստակերտցու պատմելով՝ գյուղի դպրոցում 1-ին դասարան չկա, յոյնու դասարանների համար Սիսիանից են գաւառիս ուսուցիչները. այդ օրերին, եթե ավտոբուսը ուսուցիչներին բերում է Դաստակերտ, ու բնակչութեանը թշուակ են ստացած լինում, այդ ավտոբուսով գնում են, Սիսիանում են առեւտուր անում, բայց արդեն հետ գալը լինդիր է լինում. ճարահատոյալ՝ տարսի են նստում. «Են որ ուսուրուսակութթօնից էջ 2

Տեղացած ձյունն անակնկալ չէր ճանապարհաշինարարների համար

ለ ንጉሴ የወጪ መመሪያ በትራንስፖርት ደንብ

Զնամնը «Մեղրու ճանապարհների շինարարություն» եւ շահագործում ձեռնարկություն» ՍՊ ընկերության (տօնօրեն՝ Ազատ Գասպարյան) ճանապարհաշինարարների ջանքերով Մեղրի-Քաջարան միջպետական ճանապարհը բանուկ է լինում: Բայց այս օրերի Եղանակային կտրոնկ փոփոխությունների հետևանքով, որոնք արտահայտվեցին յան տեսքով, նշված ճանապարհի մնեային պահպանությունն ավելի վաղ սկսվեց: Եղանակն անակնկալ մատուցեց հոկտեմբերի 19-ի գիշերը, ավելի ստույգ՝ երեկոյան ժամը ուրից

կմեծ ծյուն տեղալ, ինչը գիշերային ժամերին ճանապարհը դարձրեց թվաքա անցանելի: Ջան շերտն առավել հսկա էր Դիբագի լեռնանցքի ամենաբարձր կետից (2535մ) դեպք քաջարան ընկած հատվածում: Գիշերը ճնամարտի էր նետվել երեք միավոր տեխնիկա (ամբարձիչ, աղ ցանող մեքենա, գրեյթեր): Այդ կրիտիկական ժամերին հերթապահում էր յոթ-ութ մարդ: Ինչպես «Սյունյաց երկրին» փոխանցեց «Մեղրու ճանապարհների շինարարություն և շահագրործում ծերնարկություն» ՍՄ ընկերության աշխողեկ Գրիշա Թումանյանը, առաջին ծյունը անակնակալի բերեց ոչ թե ճանապարհաշինարարներին, այլ վարորդ-Շարության կողմէում:



**ԱԶԱՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ
«ՄԵՂՐԻՈՒ ՃՇՃՋ» ՍՊԸ ԿԽՈՐԵՆ**



Հանձնվեց շահագործման

ՀՅ պաշտպանության նախարարության պատվերով «Մեղրու ճանապարհների շահագործում եւ շինարարություն ձեռնարկություն» ՍՊ ընկերության շինարարները (տնօրին Ազատ Գասպարյան) Ազարակ քաղաքում կառուցել են ռազմական տեխնիկայի հավաքակայան: Կառույցի շինարարությունը տեւել է երեք տարի: Ցույտեմբերի 21-ին հավաքակայանը հանձնվեց շահագործման, որի համար Ազարակ էին այցելել ՀՅ պաշտպանության նախարարության չորրորդ բանակային զորամիավորման հրամանատար, գեներալ-մայոր Ա. Սակարյանը, պաշտպանության նախարարության կառույցն ընդունող հանձնաժողովի անդամներ:

Հոկտեմբերի 21-ին «Սյունյաց երկրի» ստեղծագործական անձնակազմը նույնապես գտնվում էր հավաքակայանում: Եվ մեր դիտարկումները ցույց տվեցին, որ Սեղրու ճանապարհաշինարարները բացառիկ պատասխանատվությամբ են վերաբերվել ռազմավարական նշանակության այդ կառուցիչ պատրաստմանը: Ավելին՝ նոր կառույցը վերստին ապացուցեց

ճշմարտությունը, որ Սեղորու ճանապարհաշինարարներն անգերազանցելի են ոչ միայն ճանապարհաշինության ու ճանապարհների պահպանության, այլև քաղաքացիական ու ռազմական օբյեկտների կառուցման գործում:

ՎԱՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Յոկտեմբերի 24-ին աշխատանքային այցով Սյունիքի մարզ էր ժամանել ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը: Սյունիքի մարզպետ Սուրենի Խաչատրյա-

ԵՐԵՎԱՆ ՕՐԱՆՅԱՆԻ
ԱՅՑԸ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
Հպատակության 24-ին աշխա-

Կովունը պարզ է՝ աշխատանքային այցով Սյունիքի մարդ էր ժամանել ՀՅ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը: Սյունիքի մարզպետ Սուրենիկ Խաչատրյա-

Նը Նախարար Սեյրան Օհանյան
նի հետ այցելել է N գորամաս,
մասնակցել զրահամասի նոր ու
բացառիկ հնարավորություննե-
րով հագեցած ավտոհավաքա-
կայանի բացման հանդիսավոր
առաջնաշուրջություն:

արարողությանը:
Պաշտպանության նախարարը, ելույս ունենալով շարահիքապարակում հանդիսավոր տողանուվ շարված զինծառայողների աջքն եւ շնորհավորելով նոր ավտոհավաքակայանի բացման ու մարտական հերթափոխիք ստանձնման կապակցությամբ, սպաներին ու զինվորներին մաղրել է խաղաղ եւ անվտանգ ծառայություն: Զորամասի հոգեւոր սպասավոր, սարկավագ Ռաֆայել Պետրոսյանն օրինել է հայ զինվորի ծառայությունն ու նվիրումը հայրենիքին: Զորամասի զինծառայողներին պաշտպանության նախարար Մելքոն Օհանյանը տեղեկացրեց նաեւ զինված ուժերում կատարվող բարեփոխումների, իրամանատար-զինվոր փոխհարաբերությունների, հակառակորդի որդեգրած ազրեսիվ ու նոտացածին քաղաքականության մասին:

<http://www.syunik.gov.am>
27.10.2014p.

Տեղացած ձյունն անակնկալ չէր ճանապարհաշինարարների համար

ለ ንጉሴ የወጪ ደንብ

Անդրին, ովքեր իրենց մեքենաների ամառային (կապրոննե) անվաղողերը չեն փոխարինել ծմեռայինով։ Շատերն անվաղողերի շրթաներ չեն վերցրել։ Գրիշա Թումանյանը հավաստիացրեց, որ ծմեռային պահ-

անար անհրաժեշտ
ի ընկերությունը կու-
սասի՞ մեջ դժվար
յոյ մասին է վկայում
նցքի հերթապահու-
սխառեսված տնակի
կուտակված ավազը:
Եթեք դիմագրավմա-
ստրաստ է ժամանա-
ան:



21 հոկտեմբերի 2014թ., Դիբագի Լեռնանցք

Սիսիանի գյուղերը «մարդկությունից» կտրված են

ለ ሁኔታዎች አገልግሎት

ԱԿԴԵՐԸ 1

տեղու համար մի բան ավելի կարայինք առնեինք, տաքսուն ենք տալիս: Դիմա ուղար բռնվել ա, ահավոր ցավում ա, մի դեղատուն չկա, որ մի բան առնեն, չեմ էլ կարա տաքսով գնամ Սիսիանի հիվանդանոց: Մի անգամ մի կերպ գնացել էր բարեկամի տուն՝ Լոր օյու, ախտի ընթիրից գնայի Սիսիան, Սիսիանից էլ ավտորուս նստել գայի. չկար էլ ավտորուսը, Լորից Սիսիան էլ ավտորուս չկար: Գյուղացիք ասում են՝ գլուխուից ողուրս ենք»:

Այս համանգումը իրենց պատճամավորի անունը էլ չփառեն, դաստակերտից ասում են՝ Երևի միայն համայնքապետը կիմանա պատգամավորի անունը. ընտրությունից ընտրություն, ինչպես բնակչութեան ասացի՞՝ ինչ-որ «գալսոուկավոր» մարդիկ են գախս, ասում՝ հա, խնդիրը կլուծենը, մեզ ձայն տվեք. «Գնում ենք, ձայն ենք տախս ու մնում կոտրած տաշտակի առաջ: Ոչ մեկի պետք չի, որ ստեղ 300-ից ավելի շունչ կա, մարդագարի ապրել ենք ուզում, ին չենք ասում՝ Եկեր մեզ պահեք, ի սեր Աստծո, մենք մեզ յոլա ենք տանում, քայլ մի հատ ավտոբուս էլ չունենա՞մք»:

Նշենք, որ այս տարածաշրջանը N37 ընտրատարածքն է, որի պատգամավորն է հանրապետական Դայլ Գրիգորյանը. այս անունը, սակայն, բնակչութեան ոչինչ չասաց, եթո հուշեցինք՝ Դայլ Գրիգորյանին գոնե դիմեն. «Մենակ մարզպետի անունը գիտենք, ես է հանդին (նկատի ունենալու համար) և այս պատճենը կատարվի»:

Սյունիքի մարզպետարանի կայթ-
ջից տեղեկացանք, որ Կապանի տա-
րածաշղթանի 54 համայնքից էլ 13-ն
են ապահովված հասարակական
տրանսպորտով, իսկ Սելիոն տարա-
ծաշղթանի 16 համայնքուն միայն մեկ՝
Մեղրի-Կապան երթուղայինն է աշխա-
տում: «Առավոտի» հետ գրաւցում
Սյունիքի մարզպետարանի տեղե-
կատվության եւ հասարակայնության
հետ կապերի բաժնի պետ Լուսիննե
Մարտիքանը վստահեցրեց, որ չգոր-
ծող երթուղագծերի համար մրցութա-
յին հանձնաժողովն այս տարվա հուն-
վարի 14-ին, 15-ին եւ 16-ին մրցույթ
է հայտարարել, սակայն հայտեր չեն
ներկայացվել, այսինքն՝ ոչ մի ընկե-
րություն ցանկված չի հայտնել
երթուղագծերը շահագործելու: Հանձ-
նաժողովը, ինչպես օրենքն է պահան-
ջում, նոյն չգործող երթուղագծերի
համար այս տարվա մարտի 20-ին էլ
է մրցույթ հայտարարել, ու էլի հայտ չի
ներկայացվել. հաջորդ մրցույթը հոկ-
տենքերին է հայտարարվելու:

Սարգապետարանի աշխատակիցը մեկ այլ ուշագրավ դիտարկում էլ արեց տրանսպորտի խնդրի մասին. «Կան օյլուեր, որտեղ մի քանի ընտանիք է ապրում, օյլուից դուրս չեն գալիս, իրենց տրանսպորտ պեսը չի գալիս, իրենք էլ չեն պահանջում համապատասխան կառույցից տրանսպորտի հարց լուծել: Գուցե տեղեկատվության պակաս կամ գրագիտության խնդիր ունեն, որ այդ մարդիկ մարզպետարանին չեն

**բերթերով Են բողոքում»:
ԱՆՈՒՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
«Առավոտ», 09.09.2014**

ՀԱՅՐԱՐԴԻՎՈՒՆ

**Կապան.
հիմնանորոգում
Միջազգական
մայրուղում եւ խմելու
ջրի ներքին ցանցում**

Երեւան-Մեղրի միջնավագական մայորություն «Կապանի ճանապարհների շահագործման եւ շինարարական» ՍՊԸ-ն պետք է միջոցներով 2.5 կմ ճանապարհաշինական աշխատանքներ է իրականացրել, եւս 2.5 կմ-ը կիմմանորոգվի եկող փարի:

**Բարեկարգվել է Մ2-ի
կապանամերձ հարվածը**

«Կապաճի ճՇՃ» ՍՊԸ տնօրեն
Արարատ Կարապետյանը տեղե-
կացնում է, որ առհասարակ երեւան-
Մեղրի միջպետական Ա2 մայուս-
ողու՝ իրենց սպասարկած հատվածի
277-297 կն-ը բարեկարգման կա-
ռիք է զգում, բայց առայժմ այդ
ճանապարհահատվածից 5 կն-ի
(ամենավատըք վիճակում գտնվող
տարրեր հատվածներում) հիմնա-
նորոգման ծրագիրն է հաստատվել:
Վյու տարվա հանար նախատեսված
աշխատանքներն ավարտվել են.
հիմնանորոգված 2.7 կն-ից 2.3 կն-ը
արդեն ասֆալտապատվել է, մնա-
ցածը նախատեսված է ասֆալտա-
պատել եկող տարի: 2014-ին մոտ
450 մլն դրամի աշխատանք է կա-
տարվել, եւս այդքանը նախատես-
վում է 2015թ.:

Մայրուղով Կապան մտնողների համար հատկապես տեսանելի ու կարեւոր է Սյունիք համայնքի տարածքին կից ճանապարհահատվածի ընդլայնումը։ Արարատ Կարապետյանը նշում է, որ այս միջտ վրարավուանգ հատված էր, եւ իրենք այդուել նախագիծից դուրս բավականին աշխատանքներ են կատարել ձեռնարկության միջոցների հաշվին։ «Նախագծով այդտեղ զուտ վերանորոգում էին նախատեսել, իսկ մենք, քանի որ արդեն իսկ այդտեղ աշխատանք էինք անում, որոշեցինք ընդուանել։»

Մայրուղում կատարվող աշխատանքները ոչ թե զուտ ասֆալտապատում, այլ հիմնանորոգում են, միջավայրական ճանապարհը դրա համար իր պահանջներն ունի: «Խորքային աշխատանք է արվում, - փաստում է ընկերության տնօրինը. - սա 1960-ականներին կառուցված ճանապարհ է, որի պաստառը Վերացել էր, հողն էլ ենք հանել-փոխել, խողովակներ են փոխվում, առանձին ինժեներական կառույցներ են ավելանում, ինչ որ նախատեսված է միջավայրական ճանապարհի համար, կատարվում է»:

սար, վասպանու է»:
Ի սկզբանե այս մայրուղին
կառուցված է եղան 10 տոննա
առավելագույն թերեատրոդու-
թամբ ավտոմեքենաների համար,
իսկ անկախացումից հետո, երբ այն
ծառայում է արդեն խոշոր թերեա-
փոխադրումների համար, թերեա-
տար ծանր մեքենաներն են հատ-
կապես վնասում ու քայլայում
ճանապարհիները: ճանապարհա-
շինական ընկերության ղեկավարն
ասում է, որ այժմ իմնանորոգման
պահանջներից է նաև ճանապարհ



ԱՐԱՐԱՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ «Կապանի ճշճ» ՍՊԸ փնօրեն

իհմացկունության ավելացումը, եւ նոր աշխատանքների արդյունքում դրանք արդեն կարող են դիմանալ մինչեւ 50-60տ բնանատարողությամբ մեքենաների: Այդուհանդեռձ, նշեց լով, որ տուժման են այն համայնքները, որոնց միջով նույնպես անցնում են այդ ծանրաքարշ մեքենաները՝ պարոն Կարապետյանը կարծում է, որ պետությունը պետք է հաշվի առնի դա, եւ տվյալ համայնքներին գումար հատկացնի համայնքային ճանապարհների պահպանության համար. «Քաղաքապետարանը պետք է դրա համար նախատեսված գումար ունենա, որպեսզի ինքն էլ կարողանա ընթացիկ աշխատանք-

Ներ անել: Կոնկրետ մեզ հատկաց-
վող պահպանության գումարները
թիշ են, եւ ի ինչքան հնարավոր է, այդ
սահմաններում ենք կարողանում
պահպանել, դա բավարար չէ: Այս
ընթացքում դեռ մի թիշ հեշտ է, երբ
շահած տենդեր ունենք, դրա հաշ-
վին կարողանում ենք ճանապարհն
էլ նորմալ պահպանել, թե չէ՝ պե-
տությունը պահպանման ծախսերի
համար շատ թիշ գումար է նախա-

Ճանապարհների
պահպանություն

Հանրապետական Եշանակության եւ մարզպային ենթակայության ճանապարհներին այս տարի վերանորոգման աշխատանքները ընկերությունը չի իրականացրել, պետությունը Կապանի ճանշինի առջեւ միայն սպասարկման եւ պահպանման

Խնդիր է դրել: Խակ U2 և U17 միջազգային այսուղիներում «Կապանի ՇԱՀ» ՍՊԸ-ն նոտ 100 կմ ճանապարհ է սպասարկում:

Արարատ Կարապետյանը տեղեկացրեց, որ իր դեկավարած ընկերությունը պատրաստ է ձմեռային պահպանության եւ շահագրդնան աշխատանքներին, ապահովված են հաճապատավխան տեխնիկայով, պահեստավորված են աղճ ու պավզը: «Ինձ համար հածելի չեղարտականությունների մեջ թերանալը: Եթե գործից չհասկանաս, ու նկատողություն անեն, այլ հարց է, բայց երբ գործից հասկանում ես, պիտի խոսակցությունների տեղիք չտաս, քո գործից դժգոհություններ չինեն»: Ինչ վերաբերում է գյուղական ճանապարհների սպասարկմանը, բարդության առունով կապանամ ռեկիեֆի պարագայում դրանք բոլորն եւ նոյնան են: Եվ չնայած 180 կմ ճարագային ճանապարհային ցանցից պետքրութեից ֆինանսավորվում է ձմռանը ընդմեննը 45.6 կմ-ի, տարվա մնացած ժամանակահատվածում՝ 21.5 կմ-ի սպասարկումը, իդունը պարտավորված են զգում ձմռանը մաքրել-սպասարկել բոլոր գյուղերի ճանապարհները: «Ապրում ենք փոքր քաղաքում, անկախ նրանց՝ նախատեսված է, թե ոչ, եթե պետք է, մաքրում ենք: Օրինակ գումար է հատկացվել Կապանից մինչեւ Ագարակ գյուղ հատվածի համար, բայց ինչպէ՞ս կարող ենք մինչեւ Ուժնիս մնարու»:

Սամսոն Համբերձուկը....»:
Անդրադառնալով Սեղրի-Կապան
նոր այլընթանրաքային ճանապարհին
(Մ17)՝ ճանապարհաշխնարարը նշում
է, որ դրա անհրաժեշտությունն իրոք
կար: Եսկան չէ, որ տաք ամիսներին
մի քիչ վառելիք ու ժամանակ տնտե-
սելու համար եթե եւեկությունն այս-
տեղ այնքան է ակտիվ չէ: Մ17-ի
դերը կարեւորվում է հատկապես
ծմբան ցրտաշունչ օրերին, ու շատ
վարորդներ արդեն գերադասում են
ոչ թե Դիբագի լեռնանցքով, այլ այս-
տեղով եթե եւեկի: Պակաս կարեւոր
չէ այս ճանապարհի նշանակությունը
Ծավի ենթաշրջանի գյուղերի հա-
մար, որոնք, ի վերջո, սահման են
պահում:

Զրադարձ նոր ցանց՝ Կապանին

Կապանի ճանապարհաշինական
ընկերության այս տարի նաև լուրջ
աշխատանքներ են վստահվել Կա-
պանի խմբուն ջրամատակարարության
ներքին ցանցի նորացման աշխա-
տանքներում:


Պատվիրատու «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն տպյալ աշխատանքներն իրականացնում է Երկու ծրագրով, որոնք ֆինանսավորում են Ասիական զարգացման բանկը (860 մլն դրամ) և Վերակառուցնան ու զարգացման եվրոպական բանկը (ընդհանուր 1 մլրդ 383 մլն դրամի, որից 300 մլն դրամի աշխատանքներն է կատարում Կապանի ճանշինը): Աշխատանքները նախատեսվում են ավարտել 2015թ. հուլիսին: Ըստ նախագծի՝ քաղաքի փողոցների՝ ցանցը փոխելու համար քանդված ու վնասված հատվածներն ընկերությունն աշխատանքների ավարտից հետո նաև ասֆալտապատելու է: «Այստեղ, որտեղ աշխատանքներն ավարտել ենք, դեռևս չենք ասֆալտապատում, որովհետեւ հողի շերտը պետք է նատվածը տա, ապա ասֆալտով ծածկենք. դռա համար ժամանակ է պետք, - տեղեկացնում է Ա.Կարասպետյանը: - Հատվածներ նաև, որ ասֆալտապատ չեն, բնականաբար, դրանք չենք ծածկելու, առաջապահութեան մեջ մտնեն»:

Ճանապարհաշինությունից որևէս

«Կապանի ճշՇ» ընկերության



Ընդլայնվել է մայրուղու՝ Սյունիք համայնքի տարածքով անցնող ճանապարհակափակը



տնօրենը ցավով է նկատում, որ կապանցի արիեստավիրմերն այսօր ստիպված են աշխատանք փնտրել խնդրում, կամ երիտասարդներին է հովանավորություն պետք, ինչու օգտակար չլինես, եթե կարող ես...»:

Ընտրական գործընթացներում
միշտ ակտիվություն ցուցաբերող,
մնացած ժամանակներում զուտ
տնտեսական գործունեությամբ աչքի
ընկնող Ա.Կարապետյանը կարծում է,
որ բոլոր ոլորտներում էլ սերնախո-
խություն է պետք: Նա համոզված է,
որ երիտասարդներն ավելի լավ են
աշխատում, ավելի ճկուն ու ակտիվ
են, պարզապես փորձն է քիչ, ինչի
հնարավորությունն ավագ սերունդը
ակին նույն տա:

Կապանյան կիուստուսի Թիվի»
հեռուստաթմբկերության գլխավոր
քամնետեր Արարատ Կարապետյա-
նը չի հերթում լուրեղը, որ մի քանի
ամիս առաջ ցանկացել է վաճառել
այն, քանի որ իրենից շատ շաբը ու
ժամանակ է պահանջում, այժմ դա իր
ծրագրերում արդիական չէ: Ինչ վե-
րաբերում է հեռուստաթմբկերության
թեմատիկ ու քաղաքական ուղղվա-
ծությանը, պարուն Կարապետյանը
նշում է, որ դա նիհանշանակ ինքն է

որոշում:

Իսկ առաջիկա թիգնես-ծրագ-րերից է Կապանի կենտրոնում ժա-նանակակից առեւտրի կենտրոնի կառուցումը (վերափոխվում է նախ-կին քաղաքային հանրախանութի-շենքը), որում այժմ մեծ թափով շի-նարարական աշխատանքներ են ըն-թանում:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Կատանի տներ



Օրվա հոգեւոր սկիզբն իր շարունակությունը գտնապահ բաղաբութքի հուշահամալիրում, որդեռ քաղաքի փոնի մասնակիցները, Սյունիքի մարզական Սուրբ Հայության տաճարության գլուխավորությամբ ծաղկեցին ներ ու ծաղկեասակներ դնելով հարգեցին Սեծ հայրենականում, Արցախան ազգագաղթարփում, 88-ի երկրաշարժից զոհվածների, անհայտ կորած զինվորների հիշաբակը:

Այսպես մի խրոխսի անցյալ է հանգչում, եւ մի փառավոր գալիք է հառնում

ՍԿԻԶԲԸ Էջ 1

Կան ստեղծագործության կենտրոնի, արվեստի պետական բոլեցի սաների նկարների ցուցահանդեսը: Սանուկները նաեւ տեղում ստեղծագործում էն նկարակաների առջև:

Առաջին տաղակարպվ իր ծեռքի աշխատանքների ակումբի կավագործության ու կարաբետագործության աշխատանքներն էր ցուցադրում «Կապանի կանանց ռեսուլս կենտրոն» ՀԿ-ն, որի ազգային երանգներով՝ նաեւ Կապանը խորհրդանշող ծեռքի աշխատանքները հետաքրքրեցին տոնակատարության մասնակիցներին: Ներկաները ծանրացան տեղում նկարական առջև ստեղծագործող մանուկների գործերին:

Զբոսայգու բացօթյա դահլիճում նաեւ մանկական համերգ էր կազմակերպվել:

Իսկ Կապանի Շահումյան փողոցում կազմակերպվել էն կրոսավագքի եւ հեծանվակագիր մրցումները, որոնց կարող էն մասնակցել բոլոր ցանկացողները: Տարբեր տարիքի կապանցիներից կրոսավագին մասնակցեց 110, հեծանվակագին 65 հոգի: Մրցանակային տեղեր գրադեցների քաղաքաբետարանից ստացան մեղաներ, հուշանվերներ, մարզահագուստ, պատվորեց ու վարժասարքեր, իսկ առաջին տեղում հայտնվածները՝ նաեւ հեծանիվ:

Օրվա միջոցառումներից էր նաեւ Կապանի երկրագիտական թանգարանում բացված՝ գեղանկարչի Լորիկ Մինասյանի աշխատանքների ցուցահանդեսը:

Ի դեպ, Կապանի քաղաքապետին կից երիտասարդական խորհրդը նվեր էր պատրաստել՝ Կապանի տոնը խորհրդանշող տորթ, որը շրջեց ու բաժանվեց քաղաքի տարբեր քաղաքամասերում:

Օրվա պաշտոնական ու հանդի-



դարձագետը նշեց նաեւ, որ չնայած անելիքները դեռ շատ են, քաղաքն աստիճանաբար բարեկարգվում է, կառուցապատվում եւ օր օրի ավելի գեղեցկանում ու կոչ արեց սիրել, պահպանել, հոգատար լինել նրա

հանդեա:

Սյունիքի մարզական Սուրբ Հայությանը, ողջունելով եւ շնորհավորելով կապանցիներին, անդրադարձ կատարեց Կապանի պատմությանը, արժեւորեց քաղաքի դերն ըստ

տարբեր ոլորտների՝ հաճարոյունաբերություն, մշակույթ, կրթություն, քաղաքաշնորհություն եւ այլն: Մարզպետը կարեւորեց Կապանի դերը հատկապես որպես Սյունյաց քաղաքության աթոռանիստ, արյունաբերական խոշոր կենտրոն: «Կապանն ունեցել է հարուստ մշակույթ, հարուստ արդյունաբերություն, բայց այս ամենի կողքին բոլոր ժամանակներում ամենաբանական ու արժեավորը մարդն է, եւ ես ուզում եմ գնահատել Կապանում ապրող մարդուն, ով արարում է եւ իր ստեղծածքը փոխանցում սերունդներին», - իր ելույթը եզրափակեց Սուրբ Հայությանը:

Սիստեմ ընթերցվեց նաեւ «Երկրաբան կամավրականների միության» վարչության նախագահ գեներալ Սանվել Գրիգորյանի շնորհավորական ուղերձը կապանցիներին, ելոյն ունեցան Աժ պատգամավոր Արմեն Կապանետյանը, ազատանարտիկ Սպարտակ Ստեփանյանը, քաղաքապետին կից երիտասարդական խորհրդի անդամ Յասմիկ Գրիգորյանը, 2014թ. «Տարվա լավագույն դաստիարակ» հանրապետական մրցույթում բնության կրունքը բարեկամ դաստիարակելու հաղորդ՝ անվանակարգում հաղորդ ճանաչված Կապանի ՆԵ ՆՌԴ դաստիարակ Եմիլյա Բոչարյանը:

Կապանի քաղաքապետ Աշոտ Յայրաբետյանը «Կապան» ոսկե մեդալով հետմահու պարգևեատուց քաղաքի հայտնի զավակներ Նիկոլայ Աղախանյանին, Ալեքսեյ Գասպարյանին, Գառնիկ Խաչատրյանին, Մարատ Նուրիջանյանին, Արմեն Մկրտչյանին: Իսկ տարբեր ոլորտներում աշքի մնական 18 կապանցի համանքի դեկապարից պատվորից ստացավ:

Դանիստավոր նիստի եզրափակիչ ակորդը քաղաքապետարանին կից ժողովորդների անսամբլը ելույթ էր, որում հատկապես շերմ ընդունելության ու հիացմունքի արժանացավ փոքրիկ մեներգի Ռազմիկ Շարությունյանը՝ ժողովրդական, աշուղական երգերի իր կատարմանը:

Քաղաքի տոնը Սյունիքի մարզպետունում ավարտվեց շքեղ հրավարությամբ:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Կադանի տուր

Ասուլիս Կապանի քաղաքակերպարանում

Հոկտեմբերի 23-ին Կապանի քաղաքապետ Աշոտ Յայրապետյանը հրավիրել էր մամուլի ասուլիս, որի ընթացքում մարզկենտրոնի լրատվամիջոցներին ներկայացրեց քաղաքապետարանի բաժինների՝ այս դարված ինն ամսվա կափարած աշխարհական գործը: Համայնքի ղեկավարը թվական գլուխութեալ ներկայացրեց ֆինանսարյութեադպային բաժնի գործունեությունը ըստ որի՝ 2014 թվականի ինն ամսում եկամուտները հավաքվել են նախարարական 93.3 դրամով կամ նախորդ դարված նույն ժամանակամիջոցի համեմատ աճը կազմել է 5.6%: Մեփական եկամուտները հավաքվել են մոտ 80%-ով: Հարկերի եւ փուրքերի հավաքման մակարդակը 20%-ով գերազանցում է նախորդ դարված նույն ժամանակամիջոցի ցուցանիշը:

Այսուհետեւ համայնքի ղեկավարն անդրադարձավ տարրեր բաժինների գծով կատարված աշխատանքներին նաև նանաշենով դրանց ֆինանսավորման արյուղները: Այսպես, համայնքի միջոցներով նորոգվել է թիվ 4 Նախադպրոցական ուսումնական հաստատության տանիքը (9.8 մլն դրամ), «Դանդի փրիշ»

մեթալս կապան» ՓԲ ընկերության կողմից նորոգվել է մի խճբասենյակ եւ դահիճը, ձեռք է բերվել 14.4 մլն դրամ արժողությամբ գույք: Արամ Մանուկյան փողոցի «Ծարն» հանրախանությաց մինչեւ շուկա տանող վերգետնյա կամուրջը ընկած ճայրի բարեկարգման, կանաչապատման աշխատանքներ են իրականացվել պետքուշեցից հատկացված 7 մլն 350 հազար դրամ գումարով: «Կապան» բարեգործական իհմնադրամի միջոցներով (ավելի քան 8.5 մլն դրամ) Ծնավոր Սովույանի անվան պատմության թանգարանում կատարվել են մասնակի նորոգման աշխատանքներ: Ասֆալտապատվել է Բարձրաբարում թաղանաս տանող ճանապարհ՝ պետքուշեցի տրամադրած միջոցներով, որ կազմում է 30 մլն դրամ: «Զանգեզուրի պղնձանուիրդենային կոնքինատ» ՓԲ ընկերության միջոցներով վերակառուցվում

ստեղծելու աշխատանքներ են տպ-
վում: Ընդ որում՝ նախագծանախա-
հաշվային փաստաթրեթը պատ-
րաստ են, հայտարարվել է մրցույթ
և կանոնադրությունը պահպանական
աշխատանքները: Համաձայնություն է ծեռք-
բերվել նաև «Քառների փառք» մի-
ջազգային կազմակերպության եւ
Հայաստանի ամերիկյան համալսա-
րանի միջնորդ՝ 6.0 մԱՆ դրամ ներդրում
ապահովելու նպատակով:

Անդրամարձ Եղավ նաեւ վարչական իրավախախուզմներին: Նշվեց, որ տասնմեկ քաղաքացու նկատմամբ կիրապվել է Վարչական պատասխանատվության միջոց, ինչի արդյունքում համայնքային բյուջե ենոտագրվել 2 նվազ ավելի դրամ:

Թաղարապեսը թվարկեց կրության, ճշկդուրի եւ սպորտի բնագավառներում իրականացված միջոցառությունները, թաղարապետարանի հիմքանակորությանը անցկացված մրցումներն ու առաջնությունները, որոնք նպաստել են բնակչության փիզիկական դաստիարակությանը: Մասնավորապես, թաղարապետարանն ապահովել է կապանցի աթլետների մասնակցությունը ՀՀ աթլետիկայի առաջնությանը, որում կապանցի մարզիկները գրավել են ինը մրցանակային տեղ:

Digitized by srujanika@gmail.com

Աստվածին մասնակցող լրագործների քաղաքավետին ուղղված հարցերն առնչվում էին Կապանի օդանավակայանի հճարավոր վերագրոնակնանը, քաղաքի Վաշչական քան թաղամասի գագիփիկացմանը քաղաքապետարան-մարզային հշեցումը և կուսակցությունը համարակալու մասին մայթերի նորոգմանը մարզկենտրոնի բնակչության զբաղությանը: Եղան նաև այլ ոլորտների վերաբերող հարցադրումներ:

ՎԱՐՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Երկրագիրական թանգարանում ցուցահանդես է...

Թաղաքի տոնի առթիվ Կապանի Երկրագիտական թանգարանի ցուցարարում բացվեց գեղանկարչի Լորիկ Մինասյանի ցուցահանդեսը, որ գործելու է մինչեւ նոյեմբերի 18-ը: Ցուցադրանքում դիմանկարներ են, բնանկարներ, գեղանկարչական կոմպոզիցիաներ: «Այսկերպայություն», «Ուժվիշեմ», «Ավետում», «Մտորում», «Դեպի հավերժություն», «Ժաղողություն» խորագիրերը բացահայտում են կտավների բովանդակությունը: Բացնա խոսքում թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանը նշեց. «Գեղանկարչի աշխատանքների գնահատականը թողնելով արվեստաբաններին, կարելի է փաստել, որ Լորիկ Մինասյանը կապանցի արվեստասերին է ներկայացել փոքր, բայց արժեքավոր ցուցադրանքը: Սեր Երկրամասի, մեր քաղաքի հարստությունը, նախեւառաջ, մարդիկ են, այդ մարդկանցից մեկը գեղանկարիչ Լորիկ Մինասյանն է, ով քաղաքի տոնի առթիվ ցանկություն է հայտնել ներկայացնել իր կտավները մի հարկի տակ, որոնցում թիւ չեն իր քաղաքի հարազատ Վայրերը պատկերող բնապատկերները»: Գրիշա Սմբատյանը նշեց, որ Լորիկին նախմները բրուտագործեր են եղել: Ակնարկը հասկանալի էր. ստեղծագործելու խոր արնատներ ունի: Գեղանկարչի նախաձեռնությունը ողջունեց նաեւ կապանի քաղաքապետ Աշոտ Յայրապետյանը, ով արվեստագետին հանձնեց պատվոգիր՝ քաղաքի մշակույթի զարգացման գործում ներդրած ավանդի համար:

Լորիկ Սինասյանն ավարտել է Երեւանի մանկավարժական հիմնադրությունը՝ կերպարվեստի ֆակուլտետը, աշակերտել ճանաչված արվեստագետներ ՋՇ Վաստակավոր Նկարիչ Զաքար Խաչատրյանին, Լեւոն Կողջ-



յանին, Ուլիկա Չուբարյանին, Արտաշես Քունանյանին: Լորիկ Մինասյանը ստեղծագրուում է 1986 թվականից 1992 թվականից թվականից մկարդիչների միջության անդամ է, մասնակցել բազմաթիվ միջազգային ցուցահանդեսների, նրա աշխատանքներում տեղ են զտել Ռուսաստանի, ԱՄՆ-ի Ֆրանսիայի, Գերմանիայի, Իրանի եալ երկրներում գտնվող մասնավոր հավաքածուներում: Լորիկ Մինասյանը կապան քաղաքի գինանշանի հեղինակն է:

Յշշում է, երբ մեր քաղաքը հիւտակովսկում էր, բնակելի շենքի առաջին հարկում գտնվում էր արվեստանոցը վերածվել էր ապաստարանի: Երբ օդային տագնապ էր հայտարարվում, երեխաները իշնում էին այնտեղ, շրջապատուած եղանակարչին, իսկ նա շարունակուած էր կցարել և մանուկներին բացատ

րել գեղանկարի բովանդակությունը:
Եվ ինքը, եւ երեխաները միառժա-
մանակ մոռանում էին, որ քաղաքը
հրետակոծվում է ...

Նկարչության մեջ ո՞ր գովնո՞ւ է ճախրդարում գեղանկարիչը: «Կարծիք, - պատասխանում է եւ փորձում կատակել, - ի Վերջո շիկահողդի եմ, չէ՞»: Այնուամենայնիվ նրա կտավներում բոլոր գովներն եւ իրենց տեղնումնեն, ավելի ստույգ, դրանցում բոլոր գովների ներդաշնակություն է: «Դեպի հավերժություն» կոմպոզիցիայում առաջին պյանում անիվն է, որ գլորվում է դեպի հավերժություն, իսկ հետեւի պյանում Կապան քաղաքն է՝ նույնքան հավերժական խուստուի լեռան ֆոնին: Կտավը շատերի ուշադրությունը գրավեց: «Պատկերել եմ մեր քաղաքի ընթացք՝ իր առաջընթացով, իր լավ կողմերով, հոգսերով, դժվարու-

թյուններով, անկումներով», – այսպես է նեկանաբանում հեղինակն իր գործը:

Լորիկ Մինասյան
նը ցուցահանդեսային
«շրջագայություն»
ունեցել սեպտեմբերի
24-ին Գորիսի քաղաքացիության
հում՝ ՀՀ նկարիչների
միության Սյունիքի
մասնաճյուղի օժանդակ
կուրյանք եւ Ֆրանսիական
յի Վիեն քաղաքի համար
մշակույթի տան հովանակ
նավորությանը, քացանց
վել էր Լորիկ Մինասյան
նի գեղանկարչական
աշխատանքները, որուն
տեւեց տասը օր՝
Գեղանկարիչն արժանաց
նացել էր Գորիսի քաղաքացիության
համար շնորհակալած միացույն համարությունը:

լագիլու. Ըստ մասն օրինակ հետեւքը է 2-ից, Սիխանի պահանջման վերաբարձրությունը գույքարվել են նոր գեղանկարչական աշխատանքներու դրույթու մեջ: Սյունիքը այդ շղթագայության առիթով նա ասում է, որ Սյունիքը ամեն մի քաղաքում արվեստասերու տարրեր է: Իր հավաստմամբ՝ Վերջինի ժամանակաշրջանում ստեղծագործ ծական ակտիվ կյանքով է ապրում: Մասնակցում է ցուցահանդեսներին, մտադիր է իր կտավները ցուցադրել հանրապետության մյուս մարզերում: «Քոլոր տեղերում եղել եմ, ամենահրաշալի անկյունը մեր Կապանն է», – իր խոսքն է ամփոփում Լորիկը: Ես ինչ վերաբերում է բուն ստեղծագործական ծրագրերին, մտադիր մի աշխատանքով մասնակցել Մեծ եղեռնի 100-ամյակին Նվիրված հանրապետական ցուցահանդեսին:

**Քաղաքական
բռնությունները
Հայաստանում եւ
դրանց առանձնա-
հակառակությունը
պայմանավորող
գործընթացները**

Հատված ազգագրագետ
Հրանուշ Խառասոյանի
համանուն հոդվածից

ԱՆԴՐԱՆԻԿԱՐԾ

....Այդ նույն շրջանում Կապանի Արօքածոր գյուղում, օրինակ, ընդհակառակը, քաղաքական բռնությունների գործերի հիշատակի հավելթացման եւ քաղաքական բռնությունները դատապարտելու նպատակով հուշարձան է կանգնեցվում «Եվ մի ասիր, թե ժամանակն էր մեղավոր, եւ անմեղ եւ դու» նակագրությամբ: Բոլորը, ովքեր ապրում են քաղաքական բռնությունների ժամանակաշրջանում, քաղաքական բռնությունների բուն փաստի հնարավորությամբ ունեն մեղքի իրենց բաժինը, - ահա սա է հուշարձանի նակագրության բովանդակությունը: Այս նակագրությունը չի հավասարեցնում զոհերին եւ դահիճներին, չի փորձում դահիճներին եւ զոհ ներկայացնել՝ «ժամանակաշրջանի զոհ», ընդհակառակը, այս նակագրությունը բոլորին մեղքի բաժին է ներկայացնում՝ ամեն մեկն ինչ-որ չափով թույլ է տվել, որ այդ «ժամանակաշրջանը» լինի:

Հիշյալ մակագրության «հեղինակը» Կապանի Երկրագիտական թանգարանի տնօրին Գրիշա Սնբաւոյանն էր, ով ինքն իրեն «հանձնարարել էր» սեփական նյութերով հասկանալ՝ ի՞նչ եւ ինչպէ՞ս եղավ ոչ այնքան հեռավոր երեսնական թվականներին Կապանի բնակչության հետ։ Կապան քաղաքի եւ Կապանի գյուղական բնակչությանը հայտնի բոլոր զոհերի ընտանիքներուն մեկ առ մեկ զրուցելով, գրանցելով նրանց հիշողությունները, գրանցելով համագյուղացիների հիշողությունները, հնարավորինս համադրելով դրանք արխիվային իրեն մատչելի նյութերի հետ, իընթացս նաեւ թանգարանի համար «առօրպավետով» գրավոր նյութերը՝ փաստաթրեր, ծեռագրեր, հուշագրություններ, լուսանկարներ եւ այլն, Գրիշա Սնբաւոյանը գրել է քսանականների-Երեսնականների բօնությունների մեջ, որինաց հանրային ընկալումների մասին մի հիմնային աշխատանք (Գ. Սնբաւոյան, Երկարէ վարագույրից այս լողմ, Երեւան, 2009)։ Աշխատանքի ընթացք եւ բուն աշխատանքը, վակերական եւ վերլուծական լինելուց զատ, խաղացել է նաեւ այլ դեր՝ հարություն է տվել տագնաապների եւ գուցեց գիտակցված մոռացության տակ թաղված թեմային եւ «այս տարիիների» դերակատարների մասին հարուցել հասարակական քննարկումներ մի տարածքում, որտեղ բոլորը բոլորին ճանաչում են։ 2012-13թթ., Երե մենք՝ Երկու ազգագրագետներ, Կապանում հանդիպումներ էինք ունենաւ մարդկանց հետ՝ նրանց ընտանեկան հիշողությունները գրանցելու նպատակով, համարյա բոլորի տներուն առկա էր Գ. Սնբաւոյանի գիրը, որի առանձին դրվագների ու կերպարների շուրջ դեռևս տաք քննարկումներ կային, քայլ մեծ հաշվով առարկություններ չկային։ Ահա իր այս գրքում Գ. Սնբաւոյանն ինքը կարծես թէ առաջնորդվել է «Եվ մի ասիր, թէ ժամանակն էր մեղավոր, եւ անմեղ ես դու» կարգախոսով։ ■

Հայրենագիտություն

Սյունիքի ամենանշանավոր դրույթ

Այդ տունը Բակունցների տունն է, կամ ինչպես ընդունված է ասել՝ Ակսել Բակունցի տուն-թանգարանը։ Հիմնվել է 1970-ին և անմիջապես դարձել մեր քաղաքի ամենադրախտային, մեր տարածաշրջանի ամենագրավիչ թանգարաններից մեկը։ Տան հիմնաքարությունը կազմված է ավելի ճիշտ, տան ճակատի՝ մայթեզրին հարող պարսպի հիմքը դրվել է վաղուց։ Բակունցի առաջին գրական ստեղծագործության՝ փոքրիկ Ֆելիստոնին հերոս, քաղաքացուն Մարթել Մարթվելի կարգադրությանը կեց ամսվա ընթացքում պետք է ավարտվեր դեպի փողոց նայող ճակատի շինարարությունը, որպեսզի քաղաքին տեսքը «մուրտառ» չառվել։

Սինէլ անցած դարի վերջը
դժվար էր պատկերացնել, որ Գո-
րիս Եկած թեկուզ մեկ հյուր, ան-
կախ իր գալու հիմնական նպա-
տակից, չայցելի մեծ արձակագրի
տուն: Իսկ հետագայում պարբ-
ռաբար կազմակերպվող գրիսյան
տոնները, Բակունցյան օրերն ավելի
ճանաչելի են դարձել Երևանում
Անկախության փողոցում գտնվող
այդ գողտրիկ, տիպիկ գրիսյան
առանձնատունը: Արդարության դեմ
չնեղանչելու համար ասեմ, որ չնա-
յած լյանքի բազում դժվարություն-
երին, իշխանության թե՛ տեղական
եւ թե՛ հանրապետական մարմիննե-
րը միշտ էլ ուշադիր են եղել Ակսել
Բակունցի հիշատակի այս վերջին ու-
միակ առհավատչյայի նկատմանը՝
կարծես քավելով ստուլինյան իշխա-
նությունների մեջը:

Բակունցի ձերբակալությունից հետո հալածանքներ են սկսվում նրա հարազատների նկատմամբ։ Արտավագր եւ Գրիգոր Եղբայրներին Դայաստանից տեղափոխելու համար հայրը Թեւոսը, ատիպած է լինում վաճառել տան եւ այգու մի մասը, որոնք պետության կողմից հետև են գնում միայն Ակսել Բակունցի ծննդյան 90-ամյակի նախօրյակին։ Դետագայում այգուն տեղադրվել է Բակունցի հիշատակը հավերժացնող մի շենք Խաչքար (Խենինակ՝ Ռազմիկ Արզումանյան, մեկնանա՝ Սուրեն Խաչատրյան), իսկ անցյալ տարի հիմնանորդավեցին տունը, այգու պարիսապը, տան հարակից եւ օժանուակ և արդուանեղոն։

...Քայլեսու ուղղում եմ դեպի մեծ
մտքողի տուն: Թաճգարանի նորո-
գումից հետո իմ առաջին այցելու-
թյունն է: Ինչ-որ արտաօռց (միայն
լավ իմաստով) բանի եմ սպասում,
բայց փոքր չէ նաև մտավախու-
թյունն: Պատճառը կարուտախտ կոչ-
վածին է:

Մեր թերթի էջերում մի անգամ ակնարկել են, որ անցյալ դարի 70-80-ական թվականներին Բակունցի տուն-բանգարանն իր հիմնական նպատակից զատ դարձել է նաև Գորիս քաղաքի ստեղծագործող երիտասարդության (բանաստեղծների, գեղանկարիչների, քանդակագործների) հավաքատեղի։ Արձակի մեջ վարպետի հետմահու դասերն իգուր չեն անցել։ Նրանցից շատերը դարձել են ճանաչված բանաստեղներ, քանդակագործներ, գեղանկարիչներ։ Այս, նույնական թյուն ունենալու մասին ավանդույթները շարունակվում են, թե՛ չէ, տեսնես թանգարանի նորանշանակ տնօրենը (Վարդան Սարգսյան) սիրում է իր

գործը, ինչպես սիրում էր թանգարանի հիմնադիր տնօրին Թաջիկ Սմբայեանը, թե՞ չէ, տեսնես այցելուներին ընդունո՞ւմ են այնպես, ինչպես ժամանակին ընդունել են Բակունցները, թե՞ չէ, տեսնես... Եւ նման բազում, բազմաթիվ հարցեր:

Չերկարացներու համար ուղղակի ասեմ, որ տեսածս ստիպեցի ինձ նորից սիրահարվել Բակունցից գրչին, նրա տանը, նրա այգու ծառ ու թիվին, սիրով, հարգանքով լցվել բոլոր նրանց նկատմամբ, ովքեր ջանքեն թափել թանգարանն այս տեսքին ընթառություն:

Այցելեք եւ ինքներդ տեսեք, իսկ հիմա՝ միայն երկու փոքրիկ շտրիխ։ Տնօրեն Կարդան Սարգսյանի նախաձեռնությամբ այգու կենտրոնական կահավորվել է մի ընդարձակ տաղավար, որտեղ հյուրերը կարող են հանգստանալ, նաև վայելել գրողի այգու բարիքները։ Ինձ ուղեկցող տնօրենն ամենահաճելի անելիքները պահել եր վերջի համար։ Պաշտոնն ստանձնելուց հետո Կարդանը քանդարակի համար ծեր էր բերել եղ արու միրիավեր։ Այսօր տան կցաշենք առաջին հարկին հարող տարածում ապրում է բակունցյան միրիհավի փոքրիկ ընտանիքը՝ հայրանյայր եւ առայժմ իրենց երկու ծուտը։ Մեր այցելության պահին, ուշադրություն չդարձնելով մեր ակնապահի հայացքներին, հայր միրիհավը՝ աքլորը, կտուցով ընկույզ էր ջարդում եւ շարժելով շքեղ պոչը՝ կերակրում ընտանիքի փոքրերին։ Տեղին է Նշել, որ այս գեղեցիկ թօնումների նոյնքան գեղեցիկ «միրիհավ» անվանումը վերակենդանացրել եւ շրջանառության մեջ է որու մէջն Բալունը։

Այս համեմի գրալունքի մեջ
էնթակա երր բանգարանի դարպասից
ներս մտավ այցելուների մի փոր-
դիկ հուսմք: Տասը-տասներկու հո-
գի էին: Մի երիտասարդ տղայից
ու աղջկանից բացի՝ մնացածները
տարիքն առած մարդիկ էին: Ֆրան-
սիայից էին: Գնում էին Տարեւ, բայց
մինչ այդ ցանկացել էին ծանրութանը
մեր քաղաքի դիտարժան վայրերին:
Ուղենքող թարգմանչութին խնդրեց
կեսժամանոց փոքրիկ էքսկուրսիա-
կազմակերպել, որովհետեւ շտապում
էին: Էքսկուրսիայի ավարտին հյու-
ներից մեկոն հաղործա՛ թաճառանո-

կարո՞ղ է արդյոք իրենց վաճառքությամբ հեղինակի ֆրանսերեն թարգմանել ված որեւէ ստեղծագործություն կամ գոնե օգնել ծանրությանը դրանցից մեկի հետ։ Վաճառեն կան նվիրելու ոչինչ չկար, բայց կար «Ալպիական մանուշակի» ֆրանսերեն թարգմանությունը, եւ առաջարկվեց եթե շնորհապում, կարող են տեղափոխվել տաղավարում ու լսել։

Բայց ին պահպատ ևս են: Խոփակ-
մանչուիի-ուղեկցողը տեղի է տալիս
ֆրանսիացիներին: Տաղավար գնալու-
պետք չէ: Նրանք տեղափորկվուն են
տան բակում, ով որտեղ կարող է
աստիճաններին, այգու քարե նստա-
րանին, իսկ աղջիկն ու տղան եւ՝ հա-
վերի համար նախատեսված քարե
օրանմանի եղողին: Կառողում է:

Ֆրանսերեն ո՞մ ի՞ն բառ չփառեմ,
բայց այնպես կլանված եմ լուսում,
տեսնողը կկարծի, թե հասկանում
են: Արաջին էջը վերջացնում է, պատ-
զա տակիս ու հարցական նայում
ունենդիրներին: Ոչ որ նրա հայաց-
քին չի պատասխանում: Բոլորը



Նորովի ցուցադրվող նյութեր

զլիահակ են: Սպասում են շարունակությանը: Երկրորդ էջն էլ վերջացրեց: Սպասում են: Եվ այսպես՝ մինչեւ վերասարեց:

Վերջանելուց հետո էլ ոչ ոք տեղից չի շարժվում: Կարծես էլի ինչ որ բան է՞ն սահմանված: Տասկա՞

հնչ-որ բակի են սպասում: Կայացրու երիտասարդ գովայի կը վրա է: Աղջիկը գովայ ծեռերես սեղմէն է տղայի ծեռա քը: Սեղման ուժից տղայի մատնելու մագացել, վարդագույնմ են տակիս իսկ աղջկա մատները՝ սփրոնել: Եթե տղ դանդաղ, սկզբուն ավագներն են ետք նաեւ նրանք բարձրանուու են տեղմներից գովակ տալով սեղմուա տնօրենի, նաեւ իմ ծեռքն ու նույս դանդաղկոտությամբ դուրս գալիս ուսուասահա: Հորացաւ մ են

ନୀତିପାଦିକାଙ୍କ ପାଇଁ ଆମାହା ଦେ...
ଶନିରାକ୍ଷାଳାପିତ୍ରୀଙ୍କ, ଅକ୍ଷେତ୍ର
ଫାକ୍ଟୋଲିଂ, ଅଜୁ ମନ୍ତ୍ର ପ୍ରାଯେତ୍ରିଧି ହାନାର
ଥିଲାମାନ୍ୟୁକ୍ତ ଟିପ୍ପଣୀ-ଥାନାଦା
ରୀମି ରାଘବାରିଧି ନାମାତାଳିମନ୍ତ୍ରିଧି
ଅନ୍ତର୍ଭାବରେ ଟିପ୍ପଣୀ ଅନ୍ତିମିତ୍ରି
କାମ ହିନ୍ତରେ ପାହିବାନିମିତ୍ର ତ, ଯିବୁ
ବ୍ୟକ୍ତିଗତ୍ତ ନେବା ଉତ୍ତରଧାରିତ୍ରାକ୍ଷା
ଦ୍ୱାରାନାନ୍ତର୍ଭାବରେ ଅଗ୍ରପାଦାନିମିତ୍ର
ରେ ଟାରାବାର୍ତ୍ତମାନ୍ ଉତ୍ତରଧାରିତ୍ରାକ୍ଷାମିତ୍ର
ଅନ୍ତର୍ଭାବରେ ନିର୍ମିତ୍ର ହାନିଗୁଡ଼ିକାମିତ୍ର
ଲାଇଟ୍ ତି ଲାଇଟୋଲିଂ: ଆମେ, ଏହି ନେତ୍ରଧାରୀ
ମହି ହେଠି ଦେଇବାକିମ୍ବିକ୍ରିଧି ମେଲିଲା
ଅକ୍ଷେତ୍ରିଧି ଏ ରାଘବାରିଧି ଲାଇନିମିତ୍ର
ଯାକାମ ଆମାରାଟର, ଯିବୁ ମୃତ୍ସମିତ୍ର, ପ୍ରାଣ
ଅତେ ଜୀବିତାନିମିତ୍ରକୁ, ଅନ୍ଦାଶ ଧାରି

30-ական թթ. արտադրված մշակաբույսերի սրսկիչը:

Երկրորդի ուղղությամ
անելիքներն ավելի քան շատ են
Գուցե դա է պատճառը, որ այսօ
է թաճարանի այցելուների թիվ

ამასაკან ჯე გტევავანდილ ჩარეცა
რე: აუ რავდ მასამაც ლიტილ ქ რან
გარანტი ჰყა ფორტი ღ «მერჩავს
არაქან ჸამასკი (ზექავაჭარა» რანა
უხალან განვითარებულ ესტონ ესტონ

սիրական գիտությունների թեկնածու Թեհինիսա (Մարրուրասի): Էմբայլո որ

Ծեռայիսա Սպիրությամ). Խօսքավը, որի
ձեւավորվել է զուտ սիրողական հի-
մունքներով եւ որի սաները ուսուցի-
ներ ուսաբնորներ բարձր ուսապարան-

սեր, իւսանունը, բայից իւսանան
աշակերտներ են, ապօլում, գործ
ծով է ստորագրութական լիարժեք
կյանքով: Այն զգալի աշխատան
է կատարում գորոյ մտավոր ժա
ռանգության պրոպագանդման ո
տարածման ուղղությամբ: Բայց ա
ակնհայտորեն թիւ է: Նույն խմբա
կի ուժեղով ճախապատրաստվելում
քաղաքի դպրոցներուն արձակագր
ծննդյան 115-ամյակին նվիրված շա
րադրությունների մրցույթ անձևաց
նել: Բայց դա կ է թիւ, ակնհայտորեն
թիւ: Բակունցը մեծ, մասշտարյահին
են կասեի՝ համապետական ուշա
դրության է արժանի: Մենք՝ բոլորը
մեր ժողովուրդը պարտ է նրա հիմ
շատակին: Փորձենք մարել այս
պարտը, մենք դարձյալ մեզ են

Ավեր անում: Բայց ավաղ, դեռ պակասում է թե՛ պետական հոգածությունը, թե՛ անհատ մեկենասների ուշադիր վերաբերմունքը:

Բակունցյան թեմաներով իրատարակված վերջին լուրջ գործը Սյունիքի մարզպետ Սոլիքն Խաչատրյանի հիվանակիրությամբ Դավիթ Գասպարյանի «Ակսել Բակունց, կյանքն ու գործունեությունը» մեջառողջության մասին:

նագրությունն է, 2009թ.:
Եվլիս:

Բայց Բակունցը դրան չէ արժա-
նի:

Այս հոդվածի նախապատրաստման շրջանակներում փոքր սոցիոլոգիական աշխատանք կատարեցինք: Մի խումբ ուսանողների, բարձր դասարանցիների եւ ուսուցչների խնդրեցինք պատասխանել մեկ հարցի՝ ո՞ր բանաստեղծի ստեղծագործություններն են ավելի շատ կարդում: Ի դեպ, այդ հարցը ընթերցողներին ուղղել է նաև վերեւում հիշատակված «Միջիահավ» ակումբը մեկուկես տարի առաջ: Այն ժամանակ հարցին պատասխանած 100 հոգուց 35-ը կարդում էր Պարույր Սեւակ, 31-ը՝ Եղիշե Չարենց... եւ միայն 5-ը՝ Յան Սահյան: Սեր առաջադրության հարցին պատասխանած 87 հոգուց 27-ը ճշել էին Յան Սահյանին: Ո՞նք է պատճառը: Դա

